

| Amended: 01.11.2022. | Փոփոխված է՝ 01.11.2022թ. | Изменено: 01.11.2022. |
|---|--|---|
| ITERMS AND CONDITIONS | ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ | ПРАВИЛА И УСЛОВИЯ |
| Campaign name: VISA x FIFA 22 Campaign | Գովազդային արշավի անունը . VISA x ՖԻՖԱ արշավ | Название рекламной кампании: кампания VISA x ФИФА |
| <p>Visa is implementing a campaign for Visa cardholders in Armenia, according to which any Visa cardholder who makes a purchase in the minimum amount of 7,000 (seven thousand) AMD and pays via its Visa Card (except for purchases made via Visa Business, Visa Business Platinum and Visa prepaid cards) will automatically participate in the raffle organized at the end of the campaign period and can win one of the 102 prizes (hereinafter: “Campaign”) in accordance with the conditions set forth in this document (hereinafter referred to as the “Terms and Conditions”). The list of prizes is accessible in the Annex 1 of the Terms and Conditions.</p> | <p>Վիզան Հայաստանում Վիզա քարտապանների համար իրականացնում են Արշավ, համաձայն որի յուրաքանչյուր Վիզա քարտապան, ով առնվազն 7,000 (յոթ հազար) ՀՀ դրամ և ավելի արժողությամբ գնում է կատարում վճարելով իր Վիզա քարտով (բացառությամբ Visa Business (Բիզնես), Visa Business Platinum (Բիզնես Պլատինում) և Visa կանխավճարային քարտերով կատարված գնումների) ավտոմատ կերպով մասնակցում է Արշավի վերջում կազմակերպվող խաղարկությանը և կարող է շահել 102 Նվերներից մեկը (այսուհետ՝ «Արշավ») սույն փաստաթղթով սահմանված պայմաններին համաձայն (այսուհետ՝ «Պայմաններ և դրույթներ»): Նվերների ցանկը հասանելի է Պայմաններ և դրույթներին կից Հավելված 1-ում:</p> | <p>Visa реализует кампанию для держателей карт Visa в Армении, согласно которой любой владелец карты Visa, совершивший покупку на минимальную сумму 7000 (семь тысяч) драмов РА и оплативший ее с помощью карты Visa (за исключением покупок, совершенных с помощью карт Visa Business, Visa Business Platinum и Visa prepaid), автоматически участвует в розыгрыше в конце кампании и может выиграть один из 102 подарков (далее «Кампания») в соответствии с условиями, установленными настоящим документом (далее «Правила и условия»). Список подарков доступен в Приложении 1 к правилам и условиям.</p> |
| <p>By agreeing to these Terms and Conditions, you declare that you have read the terms on participation in the lottery and winning the prizes before making any purchases and accept all the conditions listed below.</p> | <p>Սույն Պայմաններին և դրույթներին համաձայնելով Դուք հայտարարում եք, որ ծանոթացել եք խաղարկությանը մասնակցելու և Նվերներ շահելու պայմաններին նախքան գնումներ կատարելը, ինչպես նաև ընդունում եք ստորև ներկայացվող բոլոր պայմանները:</p> | <p>Соглашаясь с настоящими Правилами и условиями, вы заявляете, что ознакомились с условиями участия в розыгрыше и выигрыша подарков, прежде чем совершать какие-либо покупки, и принимаете все условия, перечисленные ниже.</p> |

| | | |
|--|--|---|
| <p>We reserve the right to revise these Terms and Conditions from time to time. We ask you to periodically review the terms and conditions to familiarize yourself with the changes. We are not responsible for any expected changes in the terms of the preliminary notification, and you agree that you participate in the campaign solely at your own risk.</p> | <p>Մենք իրավունք ենք վերապահում ժամանակ առ ժամանակ վերանայել սույն Պայմաններն ու դրույթները: Խնդրում ենք պարբերաբար վերանայել Պայմաններն ու դրույթները՝ փոփոխությունների հետ ծանոթանալու նպատակով: Մենք որևէ պարտավորություն չենք կրում Ձեզ նախապես ծանուցելու Պայմաններում և դրույթներում ակնկալվող փոփոխությունների մասին, իսկ Դուք համաձայնում եք, որ Արշավին մասնակցում եք բացառապես սեփական ռիսկով:</p> | <p>Мы имеем право время от времени пересматривать настоящие Правила и условия. Мы просим вас периодически просматривать Правила и условия, чтобы ознакомиться с изменениями. Мы не несем ответственности за любые ожидаемые изменения в условиях предварительного уведомления, и вы соглашаетесь с тем, что участвуете в Кампании исключительно на свой риск.</p> |
| | | |
| <p>1. <u>Description of the Campaign, conditions, and eligibility</u></p> | <p>1. <u>Արշավի նկարագրությունը, պայմանները և համապատասխանությունը</u></p> | <p>1. <u>Описание, условия и соответствие Кампании</u></p> |
| <p>If you are a Visa cardholder, you can win one of the 102 prizes (hereinafter: “Prizes”) if you satisfy the following cumulative conditions:</p> | <p>Եթե Դուք Վիզա քարտապան եք, Դուք կարող եք շահել 102 նվերներից մեկը (այսուհետ «Նվերներ»), եթե Դուք միաժամանակ բավարարում եք հետևյալ պայմաններին՝</p> | <p>Если вы являетесь держателем карты Visa, вы можете выиграть один из 102 подарков (далее «Подарки»), если вы одновременно соблюдаете следующие условия:</p> |
| <p>a. You make a one-time purchase (either via POS or E-comm) of 7,000 AMD with your Visa card (except for Visa Business, Visa Business Platinum, and Visa prepaid cards) during the Campaign Dates; and</p> | <p>ա. Դուք միանվագ առնվազն 7,000 ՀՀ դրամ (POS տերմինալի կամ էլեկտրոնային առևտրի միջոցով) և ավել արժողությամբ գնում եք կատարում Ձեր Վիզա քարտի (բացառությամբ Visa Business (Բիզնես), Visa Business Platinum (Բիզնես Պլատինում) և Visa կանխավճարային քարտերի) միջոցով Արշավի անցկացման օրերին, և</p> | <p>а. Вы совершаете единовременную покупку на сумму не менее 7,000 драмов РА (через POS терминал или электронную коммерцию) и более в дни проведения Кампании с помощью вашей карты Visa (кроме Visa Business, Visa Business Platinum и предоплаченных карт Visa), и</p> |

| | | |
|--|---|---|
| <p>b. The unique identification number given to You was randomly selected as the winner and by answering a phone call from a representative of the bank, you agreed to become the winner.</p> | <p>բ. Ամեն գնման համար տրամադրված հատուկ նույնականացման համարը պատահականության սկզբունքով ընտրվել է որպես հաղթող և Դուք համաձայնել եք հաղթող ճանաչվել:</p> | <p>б. Специальный идентификационный номер, предоставленный для каждой покупки, был выбран случайным образом в качестве победителя, и вы согласились быть победителем.</p> |
| <p>Only Visa cardholders (except for Visa Business, Visa Business Platinum, and Visa prepaid cardholders) whose cards are issued by any bank in the Republic of Armenia are eligible to participate in the Campaign.</p> | <p>Միայն Վիզա քարտապանները (բացառությամբ Visa Business (Բիզնես), Visa Business Platinum (Բիզնես Պլատինում) և Visa կանխավճարային քարտապանների), որոնց քարտերը թողարկվել են Հայաստանի Հանրապետության որևէ բանկի կողմից, իրավունք ունեն մասնակցել արշավին:</p> | <p>Только владельцы карт Visa (за исключением владельцев карт Visa Business, Visa Business Platinum и предоплаченных карт Visa), чьи карты выпущены любым банком в Республике Армения, имеют право участвовать в Кампании.</p> |
| <p>In the end of the Campaign dates, the results of transactions that meet the conditions are summarized, and each transaction is provided with a unique identification number. If the transaction is performed via Visa cards through Apple Pay or other wallets/issuer applications, then that transaction is provided with three unique identification numbers which means that the cardholder will be given three chances in the draw.</p> | <p>Արշավի ավարտին պայմանների բավարարող գործառնությունները ամփոփվում են և յուրաքանչյուր գործառնությանը տրվում է հատուկ նույնականացման համար: Եթե գործառնությունը տոկենիզացված է, օրինակ կատարվել է Apple Pay-ի (Էփլ Փեյ) կամ այլ դրամապանակի/թողարկող հավելվածների միջոցով, ապա գործառնությանը տրվում է երեք հատ հատուկ նույնականացման համար, որը նշանակում է, որ քարտապանը ստանում է երեք հնարավորություն խաղարկության ժամանակ:</p> | <p>По завершении Кампании результаты транзакций, соответствующих условиям, суммируются, и каждой транзакции присваивается уникальный идентификационный номер. Если транзакция осуществляется с помощью карт Visa через Apple Pay или другие кошельки / приложения эмитента, то этой транзакции присваиваются три уникальных идентификационных номера, что означает, что владельцу карты будет предоставлено три шанса на участие в розыгрыше.</p> |
| <p>Each transaction is settled in up to 7 days and the identification numbers are provided to the organizer (host) without any personal</p> | <p>Յուրաքանչյուր գործառնություն մշակվում է մինչև 7 օրվա ընթացքում և նույնականացնող համարները առանց քարտապանների անձնական տվյալների, տրամադրվում են</p> | <p>Каждая транзакция обрабатывается в течение 7 дней, а идентификационные номера предоставляются организатору</p> |

| | | |
|---|---|---|
| <p>details of the cardholders until October 28 of 2022.</p> | <p>Կազմակերպչին (Վարողին) մինչև 2022թ. հոկտեմբերի 28-ը:</p> | <p>(хостеру) без каких-либо личных данных владельцев карт до 28 октября 2022 года.</p> |
| <p>The results of the draw are summarized live (except for the draw of the 5th Prize of Appendix 1 to these Terms and Conditions, the results of which are summarized by the commission and published as a video on the official Visa page) by a commission consisting of representatives participating banks in the Campaign. The winning identification numbers are drawn by the Organizer (Host) and after clarifying the necessary information about the cardholder, the relevant bank employees contact the cardholders by phone call.</p> <p>If it is not possible to contact the cardholder, the Organizer (Host) draws another identification number as reserve. During the draw, representatives of the bank try to contact the cardholder three additional times, and in case of failure, they try to contact three more times the next day. If it is impossible to contact the cardholder, the bank's representatives contact the cardholder with a reserve identification number.</p> | <p>Խաղարկության արդյունքները ամփոփվում են ուղիղ հեռարձակմամբ (բացառությամբ սույն Պայմաններ և դրույթների հավելված 1-ով սահմանված 5-րդ Նվերի խաղարկության, որի արդյունքները ամփոփվում են հանձնաժողովի կողմից և տեսանյութի տեսքով հրապարակվում Visa-ի պաշտոնական էջում) Արշավին մասնակից բանկերի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից: Կազմակերպչի (Վարողի) կողմից դուրս են բերվում հաղթող նույնականացման համարները և քարտապանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ճշտելուց հետո բանկի համապատասխան աշխատակիցները հեռախոսազանգի միջոցով կապ են հաստատում քարտապանների հետ: Այն դեպքում, եթե քարտապանի հետ կապ հաստատել չի ստացվում, Կազմակերպչի (Վարողի) կողմից դուրս է բերվում ևս մեկ պահեստային նույնականացման համար: Խաղարկության ընթացքում բանկի ներկայացուցիչները երեք լրացուցիչ անգամ փորձում են կապ հաստատել քարտապանի հետ, որի ձախողման դեպքում հաջորդող օրը ևս երեք անգամ փորձում են կապ հաստատել: Քարտապանի հետ կապ հաստատելու անհնարիության պարագայում բանկի ներկայացուցիչները կապ են հաստատում պահեստային</p> | <p>Результаты розыгрыша обобщаются в прямом эфире (за исключением Розыгрыша 5-го Подарка, установленного Приложением 1 к настоящим Правилам и Условиям, результаты которого обобщаются комиссией и публикуются в виде видео на официальной странице Visa) Комитета, состоящей из представителей банков, участвующего в Кампании. Организатором (Модератором) выводятся выигранные идентификационные номера и после уточнения необходимой информации о держателе карты соответствующие сотрудники банка посредством телефонного звонка связываются с держателями карты.</p> <p>В том случае, если не получается связаться с держателем карты, Организатором (Модератором) выводится еще один резервный идентификационный номер. Во время розыгрыша представители банка три дополнительных раза пытаются связаться с держателем карты, в случае провала которого на следующий день еще три раза пытаются связаться. В случае невозможности связаться с держателем карты представители банка связываются с держателем карты с резервным идентификационным номером.</p> |

| | | |
|---|---|---|
| | նույնականացման համարով քարտապանի հետ: | |
| After the draw, information on winners is published on cis.visa.com in 14 days' time. | Խաղարկության ավարտից հետո հաղթողները հրապարակվում են cis.visa.com կայքում 14 օրվա ընթացքում: | После розыгрыша информация о победителях публикуется на cis.visa.com через 14 дней. |
| 2. Terms of the Campaign | 2. Արշավի ժամկետները | 2. Сроки Кампании |
| The Campaign is held from 00:00:00, September 28, 2022, to 23:59:59 October 28, 2022, local time i.e., for a period of 1 month (hereinafter: "Campaign dates"). Transactions authorized within those dates are eligible for the Campaign. | Արշավն իրականացվում է 2022 թվականի սեպտեմբերի 28-ից ժամը 00:00:00 մինչև 2022 թվականի հոկտեմբերի 28-ը ժամը 23:59:59, այսինքն՝ 1 ամիս ժամկետով (այսուհետ՝ «Արշավի օրեր»): Այդ ամսաթվերին հաստատված գործարքներն են իրավասու մասնակցել Արշավին: | Кампания проводится с 00:00:00 28 сентября 2022 года до 23:59:59 28 октября 2022 года по местному времени, т.е. в течение 1 месяца (далее: "Даты проведения Кампании"). Транзакции, авторизованные в течение этих дат, имеют право на участие в Кампании. |
| The Campaign dates are not subject to change. | Արշավի անցկացման օրերը փոփոխության ենթակա չեն: | Даты проведения Кампании не подлежат изменению. |
| The Campaign will end at 23:59:59 on October 28, 2022 and the live Draw as well as the publication of a video based on the results of the Draw will be held on November 14, 2022. | Արշավը կավարտվի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի երեկոյան ժամը 23:59:59-ին, իսկ ուղիղ հեռարձակմամբ խաղարկությունը, ինչպես նաև խաղարկության արդյունքներով տեսանյութի հրապարակումը տեղի կունենա 2022 թվականի նոյեմբերի 14-ին: | Кампания завершится в 23:59:59 28 октября 2022 года, а Розыгрыш в прямом эфире и также публикация видео по итогам Розыгрыша состоится 14 ноября 2022 года. |
| 3. The handover of Prizes | 3. Նվերների հանձնումը | 3. Вручение Подарков |
| To receive a Prize, you will be asked to provide with your passport and social security number or ID card, residency address and telephone number. The first letter of your first name and last name will be published as a winner of the Prize in cis.visa.com. Other | Նվերը ստանալու համար Ձեզանից կպահանջվի ներկայացնել Ձեր անձնագիրը և սոցիալական քարտի համարը կամ նույնականացման քարտը, բնակության հասցեն և հեռախոսահամարը: Ձեր անվան առաջին տառը և ազգանունը կհրապարակվեն cis.visa.com կայքում Նվերը | Чтобы получить Подарок, вам будет предложено предоставить свой паспорт и номер социального страхования или удостоверение личности, адрес проживания и номер телефона. Первая буква вашего имени и фамилии будет опубликована в качестве победителя Подарка в cis.visa.com. |

| | | |
|---|--|--|
| <p>personal information will be used for tax reporting and other internal purposes.</p> | <p>հաղթելու դեպքում: Այլ անձնական տվյալները կօգտագործվեն հարկային հաշվետվությունների և այլ ներքին նպատակներով:</p> | <p>Другая личная информация будет использоваться для составления налоговой отчетности и других внутренних целей.</p> |
| <p>You will be additionally contacted and notified on the date, time and location you should visit to receive the Prize.</p> | <p>Ձեզ հետ լրացուցիչ կկապվեն և կտեղեկացնեն Նվերը ստանալու ամսաթվի, ժամի և տեղի մասին:</p> | <p>С вами дополнительно свяжутся и уведомят о дате, времени и месте, которые вы должны посетить, чтобы получить Подарок.</p> |
| <p>Upon receipt of your prize, you will also be asked to sign a handover act with Publicis Hepta LLC, acting as the Campaign organizer.</p> | <p>Փաբլիսիս Հեպտայի գրասենյակում Ձեր Նվերը ստանալիս Դուք պետք է նաև ստորագրեք հանձման-ընդունման ակտը Փաբլիսիս Հեպտա ՍՊԸ-ի հետ, որը հանդես է գալիս որպես Արշավի կազմակերպիչ:</p> | <p>После получения вашего Подарка вам также будет предложено подписать акт передачи с ООО "Паблисис Гепта", выступающим в качестве организатора Кампании.</p> |
| <p>Upon receipt of your prize, you will also be provided with a guarantee letter issued by the seller for electronics Prizes if applicable.</p> | <p>Ձեր Նվերը ստանալիս Ձեզ կտրամադրվի նաև վաճառողի կողմից տրված երաշխիքային կտրոն էլեկտրական Նվերների համար:</p> | <p>После получения вашего Подарка вам также будет предоставлено гарантийное письмо, выданное продавцом на получение электронных Подарков, если это применимо.</p> |
| <p>Hereby we notify you, that under Armenian Tax Code, the Prizes you receive will be subject to personal Income tax which will be paid by Publicis Hepta. Publicis Hepta will act as your tax agent and pay your Income Tax on your behalf directly to the Tax Authorities. Your passport details, including your personal details are collected and processed by Publicis Hepta for the purposes of fulfilling tax obligations under Armenian Tax Code.</p> | <p>Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի համաձայն Նվերները հարկվում են եկամտային հարկով, որը կվճարվի Փաբլիսիս Հեպտայի կողմից: Փաբլիսիս Հեպտան հանդես կգա որպես Ձեր հարկային գործակալ և կվճարի Ձեր եկամտային հարկը Ձեր անունից անմիջապես հարկային մարմիններին: Ձեր անձնագրային տվյալները, ներառյալ Ձեր անձնական տվյալները, հավաքագրվում և մշակվում են Փաբլիսիս Հեպտայի կողմից Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի համաձայն հարկային</p> | <p>Настоящим мы уведомляем Вас, что в соответствии с Налоговым кодексом Армении полученные вами Подарки будут облагаться подоходным налогом с физических лиц, который будет уплачен компанией Паблисис Гепта. Паблисис Гепта будет выступать в качестве вашего налогового агента и уплачивать подоходный налог от вашего имени непосредственно в Налоговые органы. Ваши паспортные данные, включая ваши личные данные, собираются и обрабатываются компанией Паблисис Гепта в целях выполнения налоговых обязательств в соответствии с Налоговым кодексом Армении.</p> |

| | պարտավորությունների կատարման նպատակով: | |
|--|---|---|
| 4. Exceptions | 4. Բացառություններ | 4. Исключения |
| Transactions which do not meet the eligibility criteria do not participate in the Campaign. For avoidance of doubt, it is provided, that the following transactions will not be participating in the Campaign: | Մասնակցության պայմանները չբավարարող գործառնությունները չեն մասնակցում Արշավին: Տարրնկալումներից խուսափելու համար սահմանվում է, որ հետևյալ տեսակի գործառնությունները չեն մասնակցի Արշավին՝ | Транзакции, которые не соответствуют критериям приемлемости, не участвуют в Кампании. Во избежание сомнений, предусмотрено, что следующие транзакции не будут участвовать в Кампании: |
| a. Transactions made with a card other than Visa. | ա. Այն գործառնությունները, որոնք կատարվել են ոչ Վիզա քարտերով: | а. Транзакции, совершенные с помощью карты, отличной от Visa. |
| b. Transactions which refer to a purchase made outside the Campaign dates. | բ. Այն գործառնությունները, որոնք կատարվել են Արշավի օրերից դուրս: | б. Транзакции, которые относятся к покупке, совершенной вне дат Кампании. |
| c. Cash withdrawals. | գ. Կանխիկացումները: | в. Снятие наличных. |
| d. Transactions, purchase amount of which is worth less than 7,000 AMD. | դ. Այն գործառնությունները, որոնց չափը չի գերազանցում 7,000 ՀՀ դրամը: | г. Сделки, сумма покупки которых составляет менее 7000 драмов РА. |
| e. Transfer money from the card account to the account of another natural or legal person. | ե. Այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հաշվին կատարված քարտային փոխանցումները: | е. Переведите деньги с карточного счета на счет другого физического или юридического лица. |
| f. Gambling-related transactions. | զ. Շահումով խաղերի հետ կապված գործառնությունները: | ж. Транзакции, связанные с азартными играми. |
| g. Any kind of illegal transactions. | է. Ցանկացած անօրինական գործառնությունները: | з. Любые незаконные транзакции. |

| | | |
|---|---|---|
| <p>h. Transactions made by individual under 18 years of age.</p> | <p>ը. 18 տարին չըրացած ֆիզիկական անձի կողմից կատարված գործառնությունները:</p> | <p>и. Транзакции, совершенные физическим лицом в возрасте до 18 лет.</p> |
| <p>i. Individuals who are prohibited from participating in raffles according to the legislation of the RA.</p> | <p>թ. Այս ֆիզիկական անձանց կողմից կատարված գործառնությունները, որոնց ՀՀ օրենսդրությանը համապատասխան արգելվում է մասնակցել խաղարկությունների:</p> | <p>й. Физические лица, которым запрещено участвовать в розыгрышах в соответствии с законодательством РА.</p> |
| <p>j. Transactions made before 00:00:01:00 on Start date 28th September'22 and after 23:59:59 on End date 28th October'22 (local time).</p> | <p>ժ. Գործառնությունները, որոնք կատարվել են մինչև 2022թ. սեպտեմբերի 28-ը ժամը 00:00:00 և 2022թ. հոկտեմբերի 28-ին ժամը 23:59:59-ից հետո (տեղի ժամանակով):</p> | <p>к. Транзакции, совершенные до 00:00:01:00 28 сентября, 2022 и после 23:59:59 28 октября 2022 (по местному времени).</p> |
| <p>k. Wallet top-ups, utility payments and telecommunications.</p> | <p>ժա. Դրամապանակների համարումը, կոմունալ և հեռահաղորդակցության ծառայությունների դիմաց վճարումները:</p> | <p>л. Пополнение кошелька, коммунальные платежи и телекоммуникации.</p> |
| <p>l. P2P/C2C transactions</p> | <p>ժբ. Սեփական հաշիվների միջև և քարտից քարտ փոխանցումների գործառնությունները:</p> | <p>м. Транзакции по переводу средств между собственными счетами и с карты на карту.</p> |
| <p>m. Transactions made by business cards of legal entities or made by Visa Business, Visa Business Platinum and Visa prepaid cards. n. Employees of participant banks.</p> | <p>ժգ. Իրավաբանական անձանց բիզնես քարտերով կամ Visa Business (Բիզնես), Visa Business Platinum (Բիզնես Պլատինում), Visa կանխավճարային քարտերի միջոցով կատարված գործառնությունները: ժդ. Մասնակից բանկերի աշխատակիցները:</p> | <p>н. Транзакции, совершенные с помощью визитных карточек юридических лиц или с помощью карт Visa Business, Visa Business Platinum и Visa предоплаченный. о. Работники банков-участников.</p> |

| | | |
|---|---|--|
| <p>5. Responsibility</p> | <p>5. Պատասխանատվությունը</p> | <p>5. Ответственность</p> |
| <p>We are not liable for any malfunction, breakage, unavailability, shortage, or any defect of any of the Prizes you receive during the Campaign. By agreeing to these Terms and Conditions you agree to relieve us from any type and form of liability related to the Campaign and handover of the Prizes. You will not be able to submit any claims to Publicis Hepta, as the Campaign organizer, or Visa which relates to your Prize. All questions and queries related to the Prizes shall be handled in accordance with the guarantee letters provided by the sellers.</p> | <p>Մենք պատասխանատվություն չենք կրում Արշավի շրջանակներում Ձեր կողմից ստացված Նվերների ցանկացած անսարքության, խնդիրների, կամ որևէ թերության դեպքում: Սույն Պայմաններին և Դրույթներին համաձայնելով, Դուք համաձայնում եք ազատել մեզ Արշավի և Նվերների հանձնման հետ կապված ցանկացած տեսակի և ձևով պատասխանատվությունից: Դուք չեք կարող Ձեր Նվերին վերաբերող որևէ պահանջ ներկայացնել Փաբլիսիս Հեպտային՝ որպես Արշավի կազմակերպչին, կամ Վիզային: Նվերների հետ կապված բոլոր հարցերն ու հարցումները պետք է լուծվեն վաճառողների կողմից տրամադրված երաշխիքային կտրոնների համապատասխան:</p> | <p>Мы не несем ответственности за любые неисправности, поломки, недоступность, недостачу или любой дефект любого из Подарков, которые вы получаете во время Кампании. Соглашаясь с этими Правилами и Условиями, вы соглашаетесь освободить нас от любого вида и формы ответственности, связанной с Кампанией и передачей Подарков. Вы не сможете предъявлять какие-либо претензии Паблисис Гепта, как организатору Кампании, или Visa, которые касаются вашего Подарка. Все вопросы, связанные с Подарками, должны решаться в соответствии с гарантийными письмами, предоставленными продавцами.</p> |
| <p>6. Personal data processing consent</p> | <p>6. Անձնական տվյալների մշակման համաձայնություն</p> | <p>6. Согласие на обработку персональных данных</p> |
| <p>You are hereby notified, that for the purposes of fulfilling our reporting obligations, as well as tax filing obligations under Armenian Tax Code, you will be required to provide us with certain personal information during your participation in the Campaign. By agreeing to these Terms and Conditions you explicitly provide us with your consent to process your personal data as provided under this clause 6, thus the legal basis for the processing of your personal data will be your informed consent.</p> | <p>Դուք սույնով ծանուցվում եք այն մասին, որ մեր հաշվետվողական պարտավորությունների կատարման, ինչպես նաև ՀՀ Հարկային օրենսգրքին համապատասխան հարկային հաշվառում և հարկային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորության կատարման նպատակով Արշավին Ձեր մասնակցության ժամանակ Ձեզանից կարող է պահանջվել մեզ տրամադրել որոշ անձնական տվյալներ: Համաձայնելով սույն</p> | <p>Настоящим Вы уведомляете, что в целях выполнения наших обязательств по представлению отчетности, а также обязательств по подаче налоговых деклараций в соответствии с Налоговым кодексом Армении, вы должны будете предоставить нам определенную личную информацию во время вашего участия в Кампании. Соглашаясь с настоящими Условиями, вы автоматический даете нам свое согласие на обработку ваших</p> |

| | | |
|---|---|---|
| | <p>Պայմաններին և Դրույթներին՝ Դուք ուղղակիորեն մեզ տալիս եք Ձեր անձնական տվյալները մշակելու համաձայնություն, ինչպես նախատեսված է սույն կետ 6-ում. հետևապես, Ձեր անձնական տվյալների մշակման իրավական հիմքն է հանդիսանում Ձեր գրավոր համաձայնությունը:</p> | <p>персональных данных, как это предусмотрено в этом пункте 6, таким образом, юридическим основанием для обработки ваших персональных данных будет ваше информированное согласие.</p> |
| <p>a. <u>Type of personal data collected:</u> Depending on the type of the Prize you win, you might be required to provide us your name, surname, telephone number, signature as well as your passport or ID card details, social security number, residence address, which are collectively referred to as “Personal Data”.</p> | <p><u>ա. Հավաքագրվող անձնական տվյալների տեսակը</u> Կախված ձեր Նվերի տեսակից՝ Ձեզանից կարող է պահանջվել մեզ տրամադրել Ձեր անունը, ազգանունը, հեռախոսահամարը, ստորագրությունը, ինչպես նաև Ձեր անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, սոցիալական քարտի համարը, բնակության հասցեն, որոնք այսուհետ միասին՝ «Անձնական տվյալներ»:</p> | <p><u>а. Тип собираемых персональных данных:</u> В зависимости от типа выигранного вами Подарка от вас может потребоваться предоставить нам свое имя, фамилию, номер телефона, подпись, а также данные вашего паспорта или удостоверения личности, номер социального страхования, адрес проживания, которые в совокупности называются “Личные данные”.</p> |
| <p>b. <u>Actions performed with Personal Data:</u> Based on your consent your Personal Data may be collected, stored, corrected, organized, used, transferred, restored or destroyed, which is collectively referred to as “Processing”, as per law of the Republic of Armenia on Personal Data Protection. You explicitly agree that your Personal Data may be transferred to the third parties located in and outside of the Republic of</p> | <p><u>բ. Անձնական տվյալների հետ կատարվող գործողությունները.</u> Ձեր համաձայնության հիման վրա Ձեր անձնական տվյալները կարող են հավաքագրվել, պահպանվել, ուղղվել, համակարգվել, օգտագործվել, փոխանցվել, վերականգնվել կամ ոչնչացվել, բոլորը միասին այսուհետ՝ «Մշակում»՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի</p> | <p><u>б. Действия, выполняемые с Персональными данными:</u> на основании вашего согласия Ваши Персональные данные могут быть собраны, сохранены, исправлены, организованы, использованы, переданы, восстановлены или уничтожены, что в совокупности называется “Обработка” в соответствии с законом Республики Армения о защите персональных данных. Вы автоматический</p> |

| | | |
|---|---|--|
| <p>Armenia, including without limitations, to tax authorities of the Republic of Armenia for Income Tax filing purposes, to Visa and all its subsidiaries and group companies for the purposes of reporting the outcome of the Campaign, to any sub-contractor or agency involved in the Campaign, to any group company of Publicis Hepta for reporting purposes.</p> | <p>Հանրապետության օրենքի: Դուք ուղղակիորեն համաձայնվում եք, որ Ձեր Անձնական տվյալները կարող են փոխանցվել երրորդ անձանց, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս, այդ թվում՝ առանց սահմանափակման, Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններին՝ եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար, Վիզային և նրա բոլոր դուստր ընկերություններին և խմբի ընկերություններին՝ արշավի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակներով, ցանկացած ենթակապալառուի կամ արշավին մասնակցող գործակալության, Փաբլիսիս Հեպտա խմբի ցանկացած ընկերության՝ հաշվետվողականության պարտավորություններն ապահովելու նպատակով:</p> | <p>соглашаетесь с тем, что ваши Персональные данные могут быть переданы третьим лицам, расположенным в Республике Армения и за ее пределами, в том числе, без ограничений, налоговым органам Республики Армения для целей подачи декларации о подоходном налоге, Visa и всем ее дочерним компаниям и компаниям группы для целей отчетности о результатах Кампании, любому субподрядчику или агентству, участвующему в Кампании, любой компании группы Паблисис Гепта для целей отчетности.</p> |
| <p>c. Withdrawal of your consent: You may withdraw your consent to Processing of Personal Data at any time by contacting Publicis Hepta at visa_promotion@publicis.am and submitting a written request. We undertake to cease the Processing and delete your Personal Data unless we</p> | <p>գ. Համաձայնության հետկանչը. Դուք կարող եք հետ կանչել Ձեր Անձնական տվյալների մշակման համաձայնությունը ցանկացած ժամանակ, կապվելով Փաբլիսիս Հեպտայի հետ՝ հետևյալ հասցեով visa_promotion@publicis.am և ուղարկելով գրավոր պահանջ: Մենք</p> | <p>в. Отзыв вашего согласия: Вы можете отозвать свое согласие на обработку Персональных данных в любое время, связавшись с Паблисис Гепта по адресу visa_promotion@publicis.am и подача письменного запроса. Мы обязуемся прекратить Обработку и удалить</p> |

| | | |
|---|---|---|
| <p>are required to archive and retain it under any legal obligation. If the withdrawal request is received before receiving the Prize than the Prize will not be provided, if the withdrawal request is received after the Prize has been received than the Personal Data for tax and related purposes will still be processed.</p> | <p>պարտավորվում ենք դադարեցնել Ձեր Անձնական տվյալների Մշակումը և ոչնչացնել դրանք, եթե մեզանից չի պահանջվում, որ դրանք արխիվացվեն և պահվեն համաձայն որևէ իրավական պարտավորության: Եթե համաձայնության հետևանքը ստացվել է Նվերը տրամադրելուց առաջ, ապա Նվերը այլևս չի տրամադրվում, իսկ եթե հետևանքը ստացվել է Նվերը ստացվելուց հետո, ապա այն Անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ են հարկային պարտավորությունների կատարման և դրա հետ կապված նպատակներով, մշակվում են:</p> | <p>ваши Персональные данные, за исключением случаев, когда от нас требуется архивировать и сохранять их в соответствии с каким-либо юридическим обязательством. Если запрос на отзыв получен до получения Подарка, то Подарок не будет предоставлен, а если запрос получен после получения Подарка, то Персональные данные для налоговых и связанных с ними целей все равно будут обрабатываться.</p> |
| <p>d. <u>Term of your consent:</u> Your consent is valid for a period of 10 years and is deemed to be provided upon your participation in the Campaign unless you revoke it earlier.</p> | <p><u>դ. Համաձայնության ժամկետը.</u> Ձեր համաձայնությունը համարվում է տրամադրված Արշավին ձեր մասնակցության պահից և գործում է 10 տարի ժամկետով, եթե ավելի վաղ հետ չկանչվի:</p> | <p><u>г. Срок действия вашего согласия:</u> Ваше согласие действительно в течение 10 лет и считается предоставленным после вашего участия в Кампании, если вы не отзовете его ранее.</p> |
| <p>e. <u>Rights:</u> You enjoy all the rights and bear all the obligations of the data subject prescribed under the law of the Republic of Armenia on “Personal Data Protection”.</p> | <p><u>ե. Իրավունքները.</u> Դուք օգտվում եք բոլոր իրավունքներից և կրում եք բոլոր պարտականությունները, որոնք տվյալների սուբյեկտի համար նախատեսված են Հայաստանի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով:</p> | <p><u>е. Права</u> Вы пользуетесь всеми правами и несете все обязанности субъекта данных, предусмотренные законом Республики Армения “О защите персональных данных”.</p> |

| | | |
|----------------------|--------------------------|-----------------------|
| Amended: 01.11.2022. | Փոփոխված է՝ 01.11.2022թ. | Изменено: 01.11.2022. |
|----------------------|--------------------------|-----------------------|

Annex 1/ Հավելված 1/ Приложение 1

| # | Item/Իր/ Предмет | Q-ty/Քանակ/ Количество | Guarantee/ Երաշխիք / Гарантия |
|----|------------------------------------|------------------------|---|
| 1 | Asus Zenbook Q407I | 2 | Մինչև 2022 թվականի նոյեմբերի կես/ Until mid of November 2022/ До середины ноября 2022 года |
| 2 | Samsung Headphones Buds Live | 2 | Մինչև 2022 թվականի նոյեմբերի կես/ Until mid of November 2022/ До середины ноября 2022 года |
| 3 | Samsung Galaxy S21 phone | 1 | Մինչև 2022 թվականի նոյեմբերի կես/ Until mid of November 2022 / До середины ноября 2022 года |
| 4 | JBL Go 2 speaker | 5 | Մինչև 2022 թվականի նոյեմբերի կես/ Until mid of November 2022 / До середины ноября 2022 года |
| 5 | Championship official Adidas balls | 50 | Չկա/ Not have / Не имеет |
| 6 | The trip to Qatar 2022™ World Cup | 1 | Չկա/ Not have / Не имеет |
| 7 | Hama Backpack, Black and Blue | 20 | Չկա/ Not have / Не имеет |
| 8 | Sony WH-XB910NB headphones | 2 | Մինչև 2023 թվականի սեպտեմբեր/ Until September 2023 / До сентября 2023 года |
| 9 | Sony MDR-RF811RKC headphones | 5 | Մինչև 2023 թվականի սեպտեմբեր/ Until September 2023 / До сентября 2023 года |
| 10 | DJI osmo action camera | 7 | Մինչև 2023 թվականի սեպտեմբեր/ Until September 2023 / До сентября 2023 года |

| | | | |
|----|---|---|--|
| 11 | Apple Watch SE MYDP2 40mm Space Gray+Black Band | 2 | Մինչև 2023 թվականի սեպտեմբեր/ Until September 2023 / До сентября 2023 года |
| 12 | Apple iPhone 13 Pro 128GB Graphite | 2 | Մինչև 2023 թվականի սեպտեմբեր/ Until September 2023 / До сентября 2023 года |
| 13 | Samsung UE55AU7140UXRU TV | 3 | Մինչև 2023 թվականի սեպտեմբեր/ Until September 2023 / До сентября 2023 года |